

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՔԵՊՍ. ԿԵՍԱՐԱՅԻ

(1590 - 1646)

Ծնած է Կեսարիա 1590 թն⁽¹⁾, Նշած է աշակերտ Դարանաղեցի Գրիգոր Վարդապետին⁽²⁾, Կը գտնուէր Կիպրոս, Ս. Մա կարի վանքը, շ. 1618 թն⁽³⁾։

Խաչատուր Կեսարացին իբրեւ արեղայ ծանօթ է 1620 թուականին, ի Պոլիս, Ս. Նիկողայոս Եկեղեցին, ուր ծաղկած է քանի մը ձեռագիրներ, որոնցմէ երկուքը Աստուածաշունչէ ժառանգն։

Խաչատուր արեղայն աշակերտած է նաեւ Տաթևացի Մովսէս Վարդապետին⁽⁴⁾, Ապա առաջնորդ կարգուած է Նոր Զուղայի, 1621 թն, կամ աւելի ետքը⁽⁵⁾։ Ան 1630 թն հանդիպած է Կեսարիոյ, և առնակցած Կեսարացի Գրիգոր Վարդապետին հետ⁽⁶⁾։ Լեհաստան գտնուած է 1630 թն, իբրեւ նուիրակ Մովսէս Կաթողիկոսի⁽⁷⁾։

Խաչատուր վարդապետի ամէնէն նշանաւոր գործը եղած է Հիմնարկուած տպարանի մը, 1636 թն, Ս. Ամենափրկիչ վան-

քին մէջ, յաղթելով բազմազան դժուարութիւններու⁽⁸⁾։

Զուղայի առաջնորդը, նախանձախնդիր Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան, բանադրած է ժանտ և դժնարար թու միկը, 1642 թն⁽⁹⁾։

Այստեղ կ'արժէ մէջ բերել յիշատակագրութիւն մը իր աշակերտներէն Սաեփանոս գրչէն, 1645 թուականով. «Յիշեցիք ... զԽաչատուր առաքելաշնորհ, քաղցր և անձնածիր ուսուցանող վարդապետն, որ է արհեստ. և առաջնորդ մարաքաղաքին Ճուղայոյ ... զի սակաւ զբընդարանութեանն է ուսուցիչ, և բազում երախտիք ի վերա մեղաւորիս ունի, և իմ ոչ հասուցանելով զսակաւ»⁽¹⁰⁾։

Խաչատուր Արքեպս. վախճանած է 1646 թն, Ճյաւուր մեծի ուրբաթին ի ժամ խաչելութեանն Գրիստոսին⁽¹¹⁾։ Մարմինը ամփոփուած է Ն. Զուղայի Ամենափրկչին վանքի տաճարին բեմին ներքնայարկը⁽¹²⁾։

Կեսարացի Խաչատուր արեղայի ծաղկած գիրքերէն ծանօթ են հետեւեալները.

1. — Աստուածաբան, 1620 թն, Կ. Պոլսոյ մէջ, ի դուռն Ս. Նիկողայոսի Գրիգ' Յակոբ Դպիր, Պատուիրատու. Մէլիքաղա, որ յատկապէս Սպահանէն Պոլիս զրկած է իր գործակալ Թասալին. — Զեռ. Ս. Յ. Թիւ 428։

2. — Քերականութիւն — Բաղգիրք, Կ. Պոլսոյ մէջ, 1620 թն, ի դուռն Ս. Նիկողայոսի Գրիգ' Յակոբ Դպիր։ Ստացող՝ Կարապետ Վարդապետ. — Զեռ. Երեւանի, Թիւ 8537 և 8563։

3. — Աստուածաբան, Կ. Պոլսոյ մէջ, ի Ս. Նիկողոս Եկեղեցին։ Գրիգ' և Ստացող՝ Գրիգոր Վրդ. Դարանաղցի. — Զեռ. Ս. Յ. Թիւ 3043։ Դար., ժամ., էջ 606։

4. — Արեւաբան, Ապահանէն մէջ, Գրիգ' Յակոբ սարկաւազ ի Պոլիս։ Ստա-

(1) Ա. Ալոյսյանեան, Պատմ. Հայ Կեսարիոյ, Բ. Հատոր, էջ 2022, 2024։

(2) Եւ. անդ լինէր Խաչատուրն, որ այժմ վարդապետ և եպիսկոպոս է Սպահան, յայնժամն աշակերտ անուն էր առ մեզ։ — Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 425։ — Եւ. զոտէր Խաչատուր խորագնազգեաց իւրատակոն ամենաշնորհ արեղան, զբանի սպասաւորն, որ է աշակերտ գրոց և հնազանդ մեղ, որ աշխատեցաւ ի օսկեղն և ի ծաղկելուն. — Նոյն, անդ, էջ 617։

(3) Որ կայր անդ ի մեր ազգացն երկու արեղայ, մէկ քահանայ, Խաչատուր անուն, և որ այժմ վարդապետ է և առաջնորդ Զուղացուն. — Նոյն, անդ, էջ 185։

(4) Առ. Վրդ. Դարբիսեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 371-2, 398։

(5) Նոյն, անդ, էջ 402։ Պատմ. Կեսարիոյ, էջ 2024։

(6) Դարբիսեցի, Պատմ., էջ 372։

(7) Նոյն, անդ, էջ 371-372, 398։

(8) Լ. Գ. Մինասեան, Նոր Զուղայի Ուղեցոյց, 1976, էջ 11։ Սիւն, 1967, էջ 57։

(9) Հայ Ժողովրդի Պատմութիւն, Երեւան, 1972, Դ. Հատոր, էջ 118։

(10) Զեռ. Ս. Յ. Թ. 1934, Յուլիս Զեռ. Ս. Յ. Կարեանց, 2. Հատոր, էջ 466։

(11) Յուլիս Զեռ. Նոր Զուղայի, Բ. Հատոր, էջ 33։

(12) Պատմ. Կեսարիոյ, էջ 2024։

ցող՝ Արդւայ Զուղայեցի՝ որդի Խոջա Վալու. — Զեռ. Նոր Զուղայի, Թիւ 58 (Ք. Հատոր):

Իր անունով կը գտնուի խաչելութեան պատկեր մը, Գրիգոր Տաթևացիի ձեռքով 1387ին գրուած Աւետարանի մը 295 էջին վրայ⁽¹⁵⁾:

Խաչատուր Արք. Կեսարացի ապագրած է Կեանեալ գործերը՝ իր հաստատած ապարանին մէջ:

1. — 1638ին, Սաղմոս⁽¹⁶⁾,

2. — 1641ին, Հարանց վարդ⁽¹⁶⁾,

(¹⁵) Նոյն, էջ 1546:

(¹⁶) Բաղժավէպ, 1978, էջ 212:

(¹⁶) Սիւն, 1967, էջ 56:

3. — 1641ին, Խորհրդասեր⁽¹⁶⁾,

4. — 1642, Ապրիլ 21ին, Ժամագիրք Ասեցի⁽¹⁷⁾,

Խաչատուր Արքեպս. Կեսարացի կը գրուէ պայծառ տեղ մը մեծանուն հայ կկեղեցականներու կարգին: Ան բարձրորէն զնահատուած է՝ իր ժամանակակիցներէն, և իրաւամբ կը փռուաւորուի այժմ իբրեւ յառաջդիմասէր և լուսամիտ գործիչ:

Ն. ԱՐԲ. ՇՈՎԱԿԱՆ

(¹⁶) Սիւն, 1966, էջ 357:

(¹⁷) Սիւն, 1967, էջ 57:



Արաչպադարան
Զեռ. Ս. Գ. Թ. 428, բղ. 8բ



Դաւիթ Մարգարե
Զեռ. Ս. Գ. Թ. 428, բղ. 260բ2